ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 30-ը նոյեմբերի 2017թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,
ՀՀ ՊՆ ՁՍՊ վարչության բնակարանային բաժնի առաջատար մասնագետ. ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Կիրակոսյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
բացակայում է՝
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Բանակցությունների վարման մասին.
2.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Բանակցությունների վարման և ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 Քանի որ ընթացակարգի 75-րդ և 76-րդ չափաբաժինների մասով «Բիդեք» և «Էյ Դի Էյ Թեք» ՍՊԸ-ների առաջարկած գները հավասար էին, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով 30.11.2017թ. ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվեցին բանակցություններ, որոնց ներկայացավ միայն «Էյ Դի Էյ Թեք» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, ով բանակցությունների արդյունքում 75-րդ և 76-րդ չափաբաժիններից յուրաքանչյուրի գին սահմանեց 21,590,000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ՝ 17,991,666.67):

1.2 **01.12.2017թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-50-րդ, 70-74-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Ինժգարանտ» ՍՊԸ-ն, իսկ 51-69-րդ, 75-76-րդ չափաբաժիններում՝ «Էյ Դի Էյ Թեք» ՍՊԸ-ն:

1.3 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.4 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ռ. Մարդոյան)

2.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Վ. Գասպարյան
Գնահատող	Տ. Հարոյան
Գնահատող	Ա. Կիրակոսյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնումները համակարգող՝	Ռ. Մարդոյան

01.12.2017թ